

Եւ առաջնոյն Տիգրան ոյ, որ ձեան տակը մեռաւ, սնդ:

Ալ հաստատեն նաև Խառվմայի Արծընուց և Վասենտիոն յոյն մատենագիրի գրուածքը. զորո՞ք Հնախօսութեան հեղինակը յառաջ կ'բերէ. ա. հատոր. եր. 42—44: Արարատեան լեռնագաւառները մարդաշափ բարձրութեամբ թանձրադած ձիւնի տակ կ'ծածկուին. Ճանապարհներն անգամ անանցանելի կը լինին անասնոց, որոց մեջէն Ճանապարհորդք և կարաւանը չկարողանալով անցնել, շատ անգամ բուրեն կ'խեղդուին, ինչպես սովորաբար կ'պատահի Վեանայ ծովի արքունի Ճանապարհի վրա, որ ծովի արև մոտեան եղերքը պատելով մինչեւ Պատգարաց նահանգը կ'համնի. շատ անգամ պատահած է որ բեռնակիր անասունք մարդով մէկ տեղում լմակոծեալ ձիւնը ծովը ձգած է:

Այսպէս են ձմեռ ժամանակ և բովանդակ Վիդ գաւառի Շիրակոյ և Կոտայից լեռնագաշտ Ճանապարհները (յուրեւանայ հիւսիսային ու արևելեան կողմէն, որո՞ք բարձր լեռներու մէջ հարթ հաւասար դիրք ունենալով) Ճանապարհորդել չի լինիր երբեք, մինչեւ որ ձիւնը խորաց հողմոյ բռնութենէն:

Այս սովորական է մեր երկրի յիշեալ գաւառներուն, թող որ Վասեացոտն գաւառը որ Արարատեան դաշտին և Արշարունեաց գաւառին սահմանակից է և աւելի յած, երբեմն այնքան սաստիկ ձմեռ եղած է պարսից իշխանու-

թեան ժամանակ, մինչեւ վայրենի գաղանք ուտելիքու տ' զգանելով, խումբ խումբ կ'գային գեղերը կը թափէին. նույն զգանասունքը կարծես թէ Ուրհայեցոյ գրածը կ'ստուգեն եղել, որ 'ի թուին հայոց շե. (1056). 'Վնասունքն, ասէ, ջովիր ջովիր լինէին և թըսչանքն երամ երամ 'ի փողոցս և 'ի տունս տունս մոանէին':

Այս դէպքը լսելով Երեանայ Հիւսէին խանը, հրաման կ'հանէ գիւղերէն խոտ ժողվել և տանել Վասեայ լանջին վրա տեղ տեղ յըրուել, որ թշուառ գոզանքը կերակրին :

Շարունակելի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱՑ ԱՅՏԱԿԱԾՎԱԾՏՈՒԹԻՒՆՔ

(Հարուն Հաւթիւն եր. 21)

Ա ասն զի՞ ինչպէս սուրբ գրքէն ժամանակագրական հաշվաները ցցյ կ'տան, ջրհեղեղը, որ եղաւ յամի աշխարհիո 1657, սորանից ետքը Վյ նահապետը ապրեցաւ այլես 350. տարի, իսկ կ'ոժանումն աշտարակին եղաւ յամի աշխարհի 1812, այսինքն ջրհեղեղէն 155, ետքը. յորում ժամանակի Հայկ Դարձաւ Հայաստան. հիմա 155, տարին ևս 350. թուէն հանենք, կ'գոնենք դարձեալ 195. տարի Վյին ժամանակ կենաց 'ի Հայաստան. որովհաստի կ'ե-

թե՛ թէ՛ հայ սատան ջրհեղեղէն ե ոքը
մինչև ՚ոյի վախճանը 350 տարի (յամի
աշխարհի 2097) և անտի մինչև ՚ոյի բայի
տարրապաշտութեան ժամանակները, որ
ըստ կարգի պիտի յիշենք, աստու ածպաշ
տութեան մէջ էր: Որքա են, զոր պատ
մաքանք իրենց պամագրութեան կարգու
գուցէ աւելորդ համարել են, բայց մէկ
ազգի սկզբնաւորութեան և նախապատ
վութեան համար՝ ամենահարկաւորնիւթ:

Հիմա կ'մնայ որ, խուզենք պատմութաւ
նից խօսքերը ևս թէ հայկայ աստուած
պաշտութեան համար որոշ գլած են՝ թէ
ո՛չ. որքան որ նորա զԲէլը մերժելուց
ևս այս յայտնի կ'իմացուի, որ ինքն ձըն
մարիտ աստուածպաշտը լով, չուզեց
զԲէլ ձանացեւ, և իբրև աստուած պաշ
տել կամ հնազանդել նորան. այսու
ամենայնիւ պատմաբաններէն ումանք
յայտնի ևս կ'գրեն այս հաւաստութիւ
նը, և այս կ'գտնենք ՚ո՞ին յէլ Վասրու
պատմագրութեան մէջ:

Պատմութեանց տէ զեկութիւն ունեցողներին յայտնի է, որ միշեալ պատ
մաքանը իրեն ժամանակագրական պատ
մութեան նիւթը քաղած է:

՚ոյին հրէից պատմագիրներէն, որոնք
են՝ ՚ոյի կանոս, ՚օեսու, ՚չեքսիպոս և
՚օովսեպոս, որոնք ՚իրիստոսէ յառաջ
պատմագրեցին:

Երկրորդ՝ ՚ոնանտ կրօնաւոր, ՚չւե
բիս պամփիլացի, ՚օսիմոս, ՚ոկրատ,
՚մէոդիորոս, որոնք գրեցին մինչև ցփոք
րըն ՚իհոդոս:

Երրորդ՝ չորրորդ և հինգերորդ կար
գի պատմագիրներն եւ կ'թողումնք որոնք
գրեթէ մինչև իրեն ժամանակը պատմա
գրեցին: ՚ոյսչափ պատմագիրները հար
կաւ ազգաց նախնի աստուածպաշտու
թեանց համար ևս խոյզ և խնդիր արած
կ'լինէին ուստին կ'քաղէ հայկայ աստ
ուածպաշտութեան վրա տուածիր ծա
նօթութիւնները բայց մեզ այս խնդրոյն
հաւաստիքը յուծելու ցոյց կ'առյ հա
ւաստարիմ վեայ, որ ալուրնուս վերա
բերութեամբ ոչ միայն հաւաստարիմ,
այլև գլուխ և իշխան և տէր միանգա
մայն ՚ոբգար ՚իւագաւորն մեր, որու
համար կ'գրէ որ ՚իւագէսս ՚ոբգելց հը^ւ
րամմաւ թարգմանեց ինչպէս կ'երևէ
բանի ընթացքէն, ՚ըրէլց լեզուէ պատ
մաքանական գրաւածները, յորոց յիշեալ
պատմագրութիւնների հետ՝ անցից ժա
մանակաց թիւերը կ'ստուգէ ինքնին
պատմագիրը յասէլն՝ "Բայց պարտ է
հանձարեղ մօաց ոչ տկարանալ յաղա
զըս աւելի և պակաս բերելցն զթիւս
ժամանակաց քանզի յորով զանազանու
թիւնս գտնենեմք յիշանասնիցն և յայ
լց թարգմանչացն գրութիւնս, և մաս
ւանդ, զըր ՚ոբգար արքայն է թարգ
մանեալ հրամանաւ թագէսսի առաքե
լցն. և զոր ստուգեաց ՚չոկովէ ՚ուր
հայեցին, մտեալ ընդ հրէութեամբ
յաղագս կարծելց, թէ չետուն զբո
վանդակ գրեալս իւրեանց ՚շշարտու
թեամբ՝ հեթանոսաց սակս նախանձու":
Եւ արդարեւ ով չի կարծեր որ ՚ոբ

գար թագաւորը աւելի եռանդ ունե
նար հետամուտ լինելու ստուգել ՚ի
թիւս աղդաց և մեր նախնայն Հայկայ
աստուածապաշտութիւնը մինչև կռա
պաշտութեան ՚ի Հայաստան մտնելը Շա
րայի օրէն . ինքը Հայոց ածապաշտու
թեան ծայրը լինելով և քրիստոնէու
թեան անդրանիկ թագաւոր ազդին , ա
ւելի ևս եռանդով գտնելու հետամուտ
կ'լինէր իր ազդին նախնի աստուածապաշ
տութեան ծայրը , և նորանով գոհ կը-
լինէր , որ իրեն ազդը ոկզէն ձշմարիտ
աստուած որ կը պաշտէր , նյյն ձշմարիտ
աստուածապաշտութեանը ինքն եղաւ ա
ռաջնորդ :

Իսկ մեր խնդիրը այսպէս կ'լուծանէ
սոյն պատմագիր . ”Ոմանը ասեն զ' Ա, Եր-
րովթ յաշտարակին անկմանէ մեռանիլ
բայց մեք ստուգեցաք յետ ժամանակի
սպանիլ նմա ՚ի Հայկայ որդւոյ իմորդու
մայ որդւոյ իմիւսայ , որդւոյ Դամիրայ
որդւոյ Յաբեթի . զի ոչ արար Հայկն ըզ-
պատկեր Իւելոյ և համարեցաւ զնա ած .
և եկն Բէլ ՚ի վերայ նորա ծանը ամ-
բոխիւ և սպան զնա Հայկ” :

Վզդային պատմիչներէն՝ այս բ միս
կ'կայ կ'երեխն Ո՞խիթար գոշ և Ո ար-
դան բարձրբերդցի , որոնք կ'գրեն Հայ-
կայ համար , որ Բէլոյ պատկերը չպաշտե-
լու համար՝ նորանից ապսոամբեցաւ , և
կենաղը եղաւ նորան :

Ըստունքին :

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի Ք Ն Ա Խ Ն Ե Ժ Յ
Խաչիկ Կարուղիկոսի առաջնոյ Կոնդակը փրկա-
կան 976. քուին

Խաչիկ Կաթուղիկոս առաջնոն է սա,
ինչպէս Լոնդակի թուականը ցոյց կտայ
որ յամին 972. յեպիսկոպոսութենէ ,
Վարչարունեաց ընտրեցաւ կաթուղիկոս
աշխային ժողովով հրամանաւ երրորդն
Վշտ թագաւորի , Վնի արքայանիստ մայ-
րաքաղաքին մէջ Ոտե փաննոս կաթուղի-
կոսի մահուանէն ետք , որ Վարչարունեաց
Վարչուահը թագաւորը աքսորեց ՚ի Կո-
տորոց սաացեալ բերուլ ՚ի Ա ասպուրա-
կան :

Բաբեգէն զոր եպիսկոպոսկ'ձեռնադրէ
Խաչիկ Կաթուղիկոս Կախավէայի թեմի
վրա՝ Ո ահան կաթուղիկոսի պատմուե-
անցքէն կ'երեխ , որ կուսակից էր կա-
թուղիկոսին՝ Ո ահանը ՚ի կաթուղիկ :
սութենէ ձգելու ժամանակին . ուստի
Երբ որ 971 թուին Ոտե փաննոս կաթու-
ղիկոսը գնաց Ո ասպուրական բազմու-
թեամբ կրօնաւորաց , ուր փախած էր
Ո ահան , նորա հետ էր և այս Բաբեգէն
վանական կոչեցեալ Ոիւնեցի :

Ո ասպուրական նահանգի այն մասն
էլ ուր է Ո . Ոտե փաննոս նախավէայի
վանքը , Ոիւնեաց նահանգին յարեմոից
սահմանակից լինելով որում հաւանա-
կոն է թէ աւելի ծանօթ լինէր Յաբեգէն
և վանահայր նախավէայի վանքին , յիշեալ
մասին վրա կաթուղիկոսը եպիսկոպոս կը
ձեռնադրէ զիաբեգէն իւր իշխանու-